## ԱՆԱՆԻԱՅԻ ՇԻՐԱԿՈՒՆԻՈՅ ՄՆԱՑՈՐԴՔ ԲԱՆԻՑ: Ի ԼՈՅՍ ԱԾ Ք. Պ. Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ 1877.

*դ. յաղագս կաթին ծրոյ*

*Կաթին ծիր, վոր անուանեցին ոչ այնպես է որ չար փիլիսոփայքն առասպելաբանեցին բազում բանիւք. Քանզի վոմանք ասացին զդմանէ թէ ճանապարհ է հին, արեգական հետ. իսկ ոգիտագունք քան զնոսա՝ առագաստ ասին Պերսեփոնայ, զոր սպիտակ սուգ կոչեցին աթենացիք. Այլք ի նոցանէ՝ Հերակղես ասեն՝ զանդէս գէրիոնի ընդ շաւիղ վարեաց. Նա և այլք և ըստ նոցին արուեստի՝ տարածումն է ասեն ստեանցն Հերայ կնոջն Արամազդայ. Դարձեալ ոմանք յառաջնոցն հայոց ասացին՝ թե խիստ ձմերանի Վահագն նախնին հայոց գողացաւ զյարդն Բարսամայ ասորւոց նախնույն. զոր և մեք սովորեցաք բնախօսութեամբ՝ Ցարդգողի հետ անուանել. Թողէք ի բաց զայդ, ով աստուածասէր լսօղք, և մի այդպիսի բան լսէք. քանզի փիլիսոփայքն բարիք ասացին զդմանէ թե խիտ աստեղք են բազումք, լոյծ ընդ աղօտ երևմանէն՝ միաւոր լոյսն տեսանի. Իսկ մեք որ եմք աշակերտք վարդապետաց եկեղեցւոյ, ասեմք՝ թե ամենայն զգայութիւնքս վերինք և ներքինք ունին խառնուած միաբանութեան առ իրարս. և է դա անգայտութիւն գոտեացն վերնոց, զթաղկեալ հրոյն նշոյլս հեղլով ի վայր՝ երևումն գործէ տեսողացն. Այս է նորա պատճառն ճշմարիտ.*

## ՅԵՋՐԱԿԱՑՈՒՄ:

*Ինչպես յերևում ե Անանիա Շիրակացու բերված կտորից— նրա ժամանակաշրջանում կաթնածրի մասին յեղել ե յերկու տեսակետ.*

*ա) «Չարը» և «տգետը»-ները կապել են կաթնածրի առաջացումը զանազան առասպելների հետ.*

բ) «Բարի» և «գիտուն»-ները պատկերացրել են կաթնածիրը վորպես՝ հեռավոր և (դրա հետևանքով) աղոտ լույս ունեցող աստղերից. «Ծիր աստեղք են բազումք, լոյծ ընդ աղօտ-երևմանէն՝ միավոր լուսյն տեսանի»։

Այդ վերջին տեսակետը ճիշտ այն տեսակետն է, վորի վրա կանգնած է ժամանակակից (XX դ.) աստղաբաշխությունը և այդ տեսակետի հիմքը դրված է յեվրոպական գիտնականների կողմից վոչ շուտ քան XVII դարը։

գ) Յերրորդ տեսակետը զուտ կրոնական է՝ «իսկ մեք որոմք աշակերտք վարդապետաց եկեղեցւոյ»...

Թեև մենք նրա սեփական բառերից իրավունք ունենք յենթադրելու, վոր նա հավանություն է տալիս յերկրորդ տեսակետին. «Թողէք ի բաց զայդ, ով աստուածասէր լսօղք, և մի այդպիսի բան լսէք. քանզի փիլիսոփայքն բարիք ասացին»... բայց և այնպես նա չի կարողանում դուրս գալ կրոնի ազդեցությունից և միանալ լրիվ չափով «բարի» և «գիտուն» փիլիսոփաներին։

Լ. Սեմյոնով

Յերևան
Աստղադիտարան

## INFORMATIONS

Abouf Galaxy (Milky way) from „Anania Shiraketzi" who, according the verified data, lived and worked in the VII-th century of new era.

„The name Milky way is not rightly interpreted by a number of phylosophers. I should say ignorant (literatim wicked) philosophers who tried to explan it as a mythological phenomenon in their talks".

„Some of them insisted upon its beeing an ancient way-the trace of the Sun. The others more unwise said that it is the sail of Parcephon called by Athenians white mourning. Also there are some, who call it the fallow traced by Heraclus for Herion, and some other, following the example of the first mentioned, says that it is the trace of milk-gland of Hera, wife of Aramasd. Also some of Armenians said that in a hard winter Vahagn, forefather of Armenians, had thieved from Barsam, forefather of Assirians, the straw whence we learned to call this trace the trace of straw-thief".

„But leave all aside, pious listeners, do not liste such things for the wise philosophers (literatim kind philosophers) say that it is a number of densely settled stars which, because of their weak brightness are seen to us in a combined light". (underlined by us). „But we, pupils of monks of the church, say that higher and lower (terrestrial) bodies hawe interconnection and the discharge of these higher dense zones falling down create an expression of above mentioned to those who looks at them".

„This is the true reason of it".

## SUMMARY

From the foregoing it is evident that Anania Shiraketzy himself was an adherent of the opinion that Milky way (Galaxy) is a group of remote, therefore „weak" stars, the light of which

we cannot see separately. And upon our eye impresses their summary light. From the last lines of the passage we see also that though he is the abherent of this opinion but out of religious motives he endeavours to hide it and tries to give to this phenomenon a religious interpretation. Jordano Bruno, the first european who spoke about it, was burnt and it is clear that in the VII century Anania Shiraketzy was unable to put in life his opinions, and he in a hidden way (phylosophers wise and ignorant) gives his opinion. Of course he could not be an adherent of ignorant ones whom he critisized.